

Ս. ՍԻՄԷՈՆ ՍԻՒՆԱԿԵԱՑ ԿՐՏՍԵՐԻ ՎԱՐՔԸ  
(Հայերի վերաբերող մի հրաշագործութեան կապակցութեամբ)

Պարոյր Սուրադեան

Ընդհանրական Եկեղեցին Սիմէոն անունը կրող շուրջ երկու տասնեակ սուրբ է ճանաչում<sup>1</sup>: Նրանց մէջ առաւել մեծարեալներ են նկատուում Սիւնակեաց վերադիրը կրողները՝ Սիմէոն Սիւնակեաց առաջին կամ Մեծը (Աւագը, 5-րդ դար) եւ Սիմէոն Սիւնակեաց Կրտսերը (521-592 թթ.): Երկուսն էլ անտիոքեան մենաստանի գործիչներ են՝ յայտնի իրենց բազում հրաշագործութիւններով: Սիմէոն Մեծը կամ Աւագը դասուած է Հայոց Եկեղեցու տօնելի սրբերի շարքը, ուստի եւ ներկայացուած է «Տօնացոյցներում», «Վարք հարանցում» ու «Յայսմաւուրքներում»<sup>2</sup>: աղբիւր ունենալով սրբի աշակերտ եւ սպասաւոր Անտոնի հեղինակած վարքի հայերէն թարգմանութիւնը<sup>3</sup>: Մինչդեռ Սիմէոն Կրտսերը տօնելիների կարգին չէ, բայց յիշատակի օր է սահմանուած մարեր ԺԹ (19) եւ մայիսի 26՝ Վարքի յայսմաւուրքային խմբագրութեան ներկայացմամբ<sup>4</sup>:

Ս. Սիմէոնի յունարէն Վարքի հեղինակը նրա աշակերտ Արկադիոս արքեպս. Կիպրացին (630-638)<sup>5</sup> է, բայց յայտնի են նաեւ այլ մշակումներ ու խմբագրութիւններ, այդ թւում՝ Նիկիփորոս Ուրանոսին պատկանող (Acta Santorum, V, 1866, pp. 310-398), Յովհան Դամասկացուն վերագրուած եւ այլն: Կիպրացու երկը աւանդուած է 10-13-րդ դարերի յունական հինգ ձեռագրով, որոնցից հնագոյնը Միւնիսենի Կայսերական մատենադարանի սեփականութիւնն է (Grec. 366)<sup>6</sup>: Վարքագրական յուշարձաններին բնորոշ ծաւալից շատ աւելին լինելու (259 դրուագ), թէ հրաշագործութիւնների առատ միջար-

կումների պատճառով բիզանդագիտութեանը յայտնի է հատուածական հրատարակութիւններով<sup>7</sup>: Համեմատաբար ընդարձակ, բայց դարձեալ քաղածոյ հրատարակումներ են կատարել յայտնի բիզանդագէտներ Ա. Պապադոպուլո-Կերամեսը<sup>8</sup> եւ Հ. Դելհայէն<sup>9</sup>:

Սիմէոն Սիւնակեաց Կրտսերի Վարքը թարգմանուել է վրացերէնի եւ պահլաւուել մի քանի ընդօրինակութիւններով (A-105, A-177, Sin-46, Jer. 26), որոնցից հնագոյնը Սինայի Ս. Եկատերինէ վանքի օրինակն է՝ գրուած 978 թ. առաջ (այդ թուին կամ, ըստ քրոնիկոնի՝ 980-ին, ձեռագրը կրկին նորագուել-կարուել է)<sup>10</sup>: Ձեռագրի նկարագրութեան առիթով Ն. Մառը նկատել է, թէ դասական հնաւանդ ուղղագրութիւնը, ոճը եւ բառագանձը յուշում են, որ թարգմանութիւնը կատարուել է «վրաց հին գրական լեզուի տիրապետութեան դարաշրջանում, երբ նրան խորթ չէին հայկաբանութիւններ»<sup>11</sup>: Եւ յիշուելի, Երուսաղէմի յունական պատրիարքարանի ձեռագրի (N 26) գրիչ Վասիլը մասնաւորեցնում է, որ թարգմանութեան տեքստում եղած amazzak-ը (հայ. «համարձակ») կամ, Ն. Մառի ուղղմամբ, anazdak-ը (հայ. «անագդակ») ինքը փոխարինել է "mgis"-ով (վրաց. «ամիջապէս»): Գրիչ «Բասիլի Սայթուրի» մականունը, Ն. Մառի ենթադրութեամբ, կարող է առնչութիւն ունենալ «Սայիդ» քաղաքին (Սայթի) կամ հայ. ծայթ (իւմա՝ ծայթ-հայ) տերմինին<sup>12</sup>:

Այսպիսով, վրացերէն թարգմանութիւնը կարող է թուագրուել 8-9-րդ դա-

րերով՝ կատարուած, հաւանաբար, Սիմէոն Սիւնակեացի մենաստանում, ուր, դատելով միաբանութիւն հետագայ շրջանի բազմազգի կազմութեան փաստով եւ վրաց վանքի (նաեւ՝ արձանագրութիւններ) գոյութեան պարագայով, կային նաեւ վրացի միաբանակիցներ<sup>13</sup>: Թարգմանութիւնն ունի յունարէն բնագիր յուշող ոչ քիչ լեզուա-ոճական եւ բառագանձային իրողութիւններ: Այս պարագան շեշտում ենք՝ տարբերելու Սիւնակեաց Աւագի (Մեծի) վարքի թարգմանութիւնից, որ Ժ. Գարիտի ապացուցմամբ կատարուած է ասորերէնից եւ իբրեւ այդպիսին, առանձնակի ուղղագրութեան արժանի յուշարձան է<sup>14</sup>:

Արդէն յիշեցինք, թէ Սիմէոն Սիւնակեաց Կրտսերը մեզանում տօնելի սրբերի կարգին չէ եւ այնուամենայնիւ, Յայսմաւուրքներում նրա յիշատակի օրը յարգուած է Վարքի համառօտ վերապատմութեամբ, տարբեր խմբագրութիւններում միմեանց հանդէպ ոչ էական տարբերութեցումներով<sup>15</sup>: Առանց մասնաւոր հետազօտութեան կարելի չէ կռահել՝ յայսմաւուրքային խմբագրութիւնը ինքնին թարգմանութիւն է յունարէն բնագրի՞ց, թէ՞ մինչ այդ գոյութիւն ունեցած վարքի հայերէն թարգմանութեան համառօտութիւն: Եթէ երկրորդը լինէր, ապա հազիւ թէ սրբի հրաշագործութիւնները ներկայացնելիս խմբագրութեան կազմողը գէթ ակնարկ չպահպանէր հայերին առնչուող դրուագի մասին, մասնաւանդ որ սրբի մի քանի հրաշագործութիւններ թուարկում են: Պատկերացնելու համար, թէ յայսմաւուրքային խմբագրութիւնների կրճատումներն ինչքան են եւ ինչ որակի, ստորեւ կը բերենք մէկ օրինակ. Հայոց «Յայսմաւուրքի» «Եւ ոմն մի այլ առեալ հաւատով ի հերաց երանելոյն՝ եղ ի մէջ խաչի եւ կանգնեաց յեկեղեցիս եւ բազում

բժշկութիւն լինէր ի հերացն Սիմէոնի եւ ի խանչէն»<sup>16</sup> նախադասութեան դիմաց յունարէն եւ վրացերէն խմբագրութիւններում բաւական ծաւալուն եւ աղբիւրագիտական առումով ուշագրաւ պատմութիւն կայ: Սրբին է ներկայանում մի վրացի երէց եւ ի բարեխօսութիւն եւ պաշտպանութիւն՝ նրանից մագ խնդրում: Ստանում է, տանում իր երկիր, անապատ տեղում տաղաւար կառուցում, մագն ամփոփում խաչի մէջ ու դնում անյտեղ, բազում ախտաժեւտներ եւ դիւահարներ ուխտի են գալիս ու մագի շնորհիւ բուժուում, նուէրներ տալիս: Վերջին իրողութեանը նախանձող շրջակայքի երէցները չարախօսում են եպիսկոպոսի առաջ, կեղծ ու պատիր համարում բուժումը: Եպիսկոպոսը երէցին զրկում է քահանայութիւնից եւ արգելում ուխտաւոր ընդունել: Երէցը հնազանդուում է, օժանդակութիւն աղերսում Ս. Սիմէոնից: Սրբի միջամտութեամբ չարով զարկուած եպիսկոպոսը կռահում է պատճառը եւ ներողութեամբ դիմում երէցին՝ այլոց կարգին բժշկութիւն խնդրելով:

Երէցը ետ է ստանում գրաւուած պարագաները եւ ուխտաւորներ ընդունելու իրաւունքը: Այդ ընթացքում պարսիկները գրաւում են տեղանքը եւ փորձում տիրանալ աղօթարանի սպասքին: Վախից մէկ օր թաքնուած երէցը վերադառնում է տաղաւար եւ երկու պարսիկներին մահացած գտնում խաչի առաջ, իսկ հրդեհելու համար վառած կանթեղի մոմը՝ հանգած: Այս ամէնի մասին Ս. Սիմէոնին պատմում է ինքը՝ Վրաստանից գնացած երէցը:

Ինչպէս տեսնում ենք, յայսմաւուրքային մէկ նախադասութեամբ միջնադարեան ողջ նովել է ամփոփուած՝ դաւանական, քաղաքական ու իրաւաւական պատմութեան ոչ անկարելու տեղիներով:

Առհասարակ պիտի նկատել, որ Ս. Սիմէոն Կրտսերի Վարքը հարուստ է Վրաստանին ու վրացիներին վերաբերող դրուագներով, բայց, ինչպէս եւ սպասելի էր, անծանօթ է Եւ հայ իրականութեանը: Վարքի յունարէն բնագրի 220-րդ (ԾԹ) եւ հին վրացերէն թարգմանութեան 222-րդ դրուագը վերաբերում է հայերին եւ պատմական առումով կարեւոր տեղեկութիւն է բովանդակում: Ահա այդ դրուագը<sup>17</sup>:

«Պահքի օրերին Հայաստանից սրբի մօտ եկան ուր ոմն մշակ ու, երբ օրհնութիւն առան նրա սուրբ ձեռքերից, նրանցից մէկն ասաց. «Աղօթի՛ր մեզ համար, ո՛վ սուրբ, քանզի երկու տարի է արդէն դուրս ենք եկել մեր երկրից եւ աշխատում ենք: Հաւաքեցինք մեր վաստակածը եւ խոստում արինք, որպէսզի գանք ու երկրպագենք քո սուրբ ոտքերը, իսկ մեր վաստակը բաժանենք այս սուրբ վանքում գտնուողներին: Ու երբ անցնում էինք Որոմնտէս գետը, [չուրմ] ընկաւ այն տոպրակը, որի մէջ էր մեր հաւաքած գանձը:

Այս լսած սուրբը յոյժ տխրեց, մօտ կանչեց սոյնն ասողին եւ խաչակնքեց ու ասաց. «Յանուն մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, գնա՛ եւ հասի՛ր այն տեղը, ուր ընկաւ: Մի՛նչեւ գօտկատեղ մտիր եւ ձեռք մտցրո՛ւ ջուրը ու կը գտնես կորցրած գանձը»: Եւ երբ գնաց այդ մարդը եւ տեսաւ գետի սաստկութիւնն ու կատաղութիւնը, երկնչեց մտնել: Ի վերջոյ, սրբի աղօթքով սրտապնդուեց ու մտաւ աջ ձեռքը [ջուրը] մտցրեց ու գտաւ գանձը՝ նոյնութեամբ կապուած, եւ դուրս հանեց, իսկ տոպրակը չգտաւ: Եւ վերադարձաւ սրբի մօտ՝ որպէսզի ցոյց տայ այն: Ու բոլորը, ովքեր լսեցին եւ տեսան, Աստծուն փառք տուեցին»<sup>18</sup>:

Յունարէն եւ վրացերէն բնագրերում կան բառային ոչ նշանակալի տարբերութիւններ, ինչպէս որ այդպիսիք կան նաեւ նոյն բնագրի կամ թարգմանութեան տարբեր ձեւագրերում, սակայն

բուն վկայութիւնը միեւնոյնն է:

Հասկանալի է, մեզ զբաղեցնողը այս ու միւս հրաշագործութիւնների կարելիանկարելի լինելը քննութեան առնելը է, այլ վկայութեան պատմական ատաղձը պարզաբանելը: Հրաշալիքը (ιο Θανμασιον Οροζ այժմ՝ *Le Mont Admirable*, այժմ՝ *Kutchuk Djebel Seman*) գտնուում է Ջեբել Մուսայից հարաւ-արեւելք՝ Անտիոքից հարաւ-արեւմուտք, Միջերկրական թափուող պատմական Որոմնտէս/Օրոմնտէս (այժմ՝ Նահր էլ Ասի) գետի միջինից վար հոսանքի արեւմտեան ափին, Գէյուք-Կարաչ-չայ գետակի միախառնման վայրից հարաւ-արեւմուտք<sup>19</sup>:

Այստեղից հետեւում է, որ ութ հայաստանցի աշխատաւորներ (մշակներ) Որոմնտէսը անցնելու եւ «գանձը ջուրը տալու համար» գետից արեւելք ընկած տարածքից պիտի գային, ասել է թէ՛ նրանք Հայաստանից աշխատանքի են մեկնել եթէ ոչ Անտիոք, ապա նրա մօտակայքում գտնուող որեւէ բնակավայր:

Ս. Սիմէոն Կրտսերի վարքում եղած հրաշագործութիւնները գերազանցապէս աւօրեական դիպուածքների հետ են կապուած, շատ յաճախ կենցաղային են՝ ազգազրական, հրաշալիքը նրանց ամենազօր լուծումների մէջ է: Հետեւաբար, դժուար է մակաբերել, որ նման իրական-աւօրեական է նկատուել նաեւ Հայաստանից դուրս հայերի արտագնայ աշխատանքի մեկնելու, ուշ շրջանի եզրով՝ պանդխտելու ստիպմունքը (երկու տարի տեւողութեամբ): Հակառակ մեր պատմողական աղբիւրների առատութեան, ցայսօր մենք չունենք 6-7-րդ դարերին վերաբերող նման բովանդակութեան տեղեկութիւն: Սա նկատառելի վկայութիւն է ոչ միայն տնտեսական, այլ նաեւ միջերկրական շփումների ու մշակութային պատմութեան համար: Քրիստոնեայ Արեւելքի այլեւայլ երկրներում

հայերէն վիմագրեր ու հայոց երբեմնի ներկայութեան այլ յիշատակարաններ գտնելիս սովորաբար երեք պարագայ է նկատի առնուում՝ ուխտագնացութիւն, գաղթ եւ միաբանակցութիւն: Ս. Սիմէոնի Վարքը յուշում է, թէ Արեւելքի երկրներում հայկական բնակավայրերի գոյացման մասնաւոր պատճառներից մէկն էլ խմբերով (Վարքում ութ հոգի է), թերեւս նաեւ ընտանիքներով աշխատանքի մեկնելն ու այնտեղ մնալն էր: Հետեւաբար հայագիր յիշատակարաններ կարող էին թողնել նաեւ արտագնայ աշխատանքի մեկնողները<sup>20</sup>: Պատահական է նաեւ Անտիոքի շրջանն աշխատանքի վայր ընտրելու իրողութիւնը. 6-7-րդ դարերում Անտիոքում առանձնակի զարկ էր ստանում շինարարութիւնը, իսկ հայերը փորձառու շինարաններ էին:

Հարկաւ ճշմարիտ էր երանայիշատակ ուսուցչիս՝ ակադ. Կորնելի Կեկելիձէն, երբ տակաւին 1913 թուին գրում էր, թէ «Շատ յաճախ սրբերի վարքերը գրուել են նրանցում նկարագրուող անցուդարձերի ականատեսների ու ժամանակակիցների կողմից՝ իրենց ստեղծագործութիւններում պահպանելով տեղեկութիւններ այնպիսի իրողութիւնների վերաբերմամբ, որպիսիք վրիպել են երդուեալ տարեգիրների ու ժամանակագիրների ուշադրութիւնից»<sup>21</sup>:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Տե՛ս Dictionnaire Hagiographique. Vies des Saints et des bienheureux, par M. L'Abbé Pétin' publié par M. L'Abbé Migne, t. II, 1850, pp. 1015-1025
- 2 «Վարք երանելոյն Սիմէոնի Սինակեցի», տե՛ս «Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնն անցին, ըստ կրկին թարգմանութեան Ասիանաց», հտ. Ա, Վեներտիկ, 1855, էջ 324-326:
- 3 Վարքի այլ մշակումների հեղինակներն են Թէոդորեսոս եպս. Անտիոքացի, Եւագրիոսը եւ Մետափրաստէսը: Հայերէն հաւաքածոյ վերոշարադրեալ խմբագրութիւն տե՛ս «Լիակատար վարք եւ վկայութիւն սրբոց, որք կան ի հին Տօնացոյցի եկեղեցոյ Հայաստանեայց», ի Հ.

- Մկրտիչ վրդ. Աւգերեան, հտ. Զ, Վեներտիկ, 1813, էջ 26-27:
- 4 Տե՛ս «Գիրք որ կոչի Այսմատրք», Կ. Պոլիս, (Հայոց ՌՃԶԹ), էջ ԵԾԶԸ: Սիմէոն Կրտսերի մասին տե՛ս նաեւ Հ. Մ. Աւգերեանի «Մճացորդք վարոց սրբոց արտաքոյ Տօնացոյցին մերոյ, յիշատակելոց ի Յասմատրս կամ ի Ծառնստիրս Հայոց, որպէս եւ Յունաց եւ Լատինացոց», «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց», հտ. ԺԲ, Վեներտիկ, 1815, էջ 341:
- 5 Bibliotheca Hagiographica Graeca, N 1689-1691; К. Керелидзе, Историко-агиографические отрывки, տե՛ս նրա «Դրուագներ վրաց հին գրականութեան պատմութիւնից», հատ. 7, Թբիլիսի, 1961 էջ 8-13 (վրաց.):
- 6 Ս. Սիմէոն Կրտսերի կենսագրութեան, Վարքի ձեռագրերի ու խմբագրութիւնների մասին տե՛ս Hippolyte Delehaye, *Les Saints, Stylites*, Bruxelles-Paris, 1923 (Reproduction anastaique, 1962), p. LIX-LXXXV
- 7 J. Hanry, *Joh. Malalās identisch mit dem Patriarchen Joh. Scholastikos?* "Byzant. Zeit", IX Band, II Heft, 1900, S. 339-340; P. van den Ven, *Encore Romanos le méloae*, "Byzant. Zeit", XII Band, 1-2 Heft, 1903, S. 159-160. Նոյնի՝ *A propos de la Vie de Stylite le Jenue*, "Anal. Bolland." t. LXVIII, p. 431-435.
- 8 "Византийский Временник", 1894, I, стр. 603-612, стр. 1908, XV, 334-356.
- 9 Le Saint Stylite, p. 238-271.
- 10 Sin-46-ի նկարագրութիւնը տե՛ս Н. Марр, *Описание груз. рук. Синайского монастыря*, М.-Л., 1940, стр. 45-53.
- 11 Н. Марр, 2. աշխ. էջ 45, 50: Նաեւ՝ Н. Марр, *Антиох Стратиг, Пленение Иерусалима...*, СПб., 1909, стр. 63-64.
- 12 Մառը նկարագրութեան մէջ թուարկում է ուշագրաւ իմաստ, գրութիւն կամ գործածութիւն ունեցող մի խումբ բաներ (Описание..., 50-51), որոնք սակայն հայկաբանութիւններ չեն:
- 13 Այդ կապակցութեամբ, վիճարկելի տեղիներով հանդերձ, ուշագրաւ են հնագէտ-արուեստաբան Վ. Ջոբաձէի ուսումնասիրութիւնները (W. Djobadze, *Materials for the Study of Georgian Manasteries in the Western of Antioch*, Louvain, 1976). Հմտ. նոյնի «Կասիուսի լեռան Սբ. Բարդամի վանքը».- Ի. Ջաւախիշվիլու ան. Թբիլիսիի պետական համալսարանի աշխատութիւններ, 338: Պատմութիւն, հնագիտութիւն, արուեստագիտութիւն, ազգագրութիւն, Թբիլիսի 2001, էջ 277-296 (վրաց.):
- 14 Հրատարակութիւնը տե՛ս G. Garitte, *Vies géorgiennes de S. Synéon Stylite l' Ancien et S. Ephrem*, Louvain, 1957. Տե՛ս նաեւ Կ. Կեկելիձէ, *Նոր հրատարակութիւն վրաց հին վարքագրու-*

թեան բնագատանում.- տե՛ս Առնոսի՝ *Դրուագներ վրաց հին գրականության պատմության հիմնական հատվածներ*, Թբիլիսի, 1962, էջ 376-382 (վրացերեն): G. Garitte, *Complements a l'edition de la Vie georgienne de S. Symeon Stylite l'Ancien*, "Le Muséon", t. LXXVI, Louvain, 1963, pp. 79-93.

15 Հմմտ. «Գիրք որ կոչի Այսմատուք», էջ ԵԾԶԳ-ԵԾԶԸ, "Le Synaxaire arménien de Ter Israel", publié et traduit par le D-r G-e Bayan, Paris, 1928, p. 495-501,

16 Le Synaxaire..., p. 500.

17 Սույն դրուագի յունարեն նախատիպ է վերաձևակերպել խմբագրությունների միջև առկայ տարբերությունները արձանագրում էն Ս. Օեստակովի հրատարակման մէջ (տե՛ս **С. Шестаков**, *Житие Симеона Дивногорца в его первичной редакции*, "Виз, Врем." т. XV, вып. 2-3, стр. 341-351.)

18 Վրացերեն թարգմանության ամբողջական գիտական հրատարակությունը տե՛ս «Կիմեն» (Kaimena), հատ. Ա, Վրաց վարքագրական յուշարձաններ. յունար-մայիս ամիսների տեքստեր: Առաջաբանը, ուսումնասիրությունն ու խմբագրությունը Կ. Կեկելիձեի, Տփղիս, 1918, էջ

215-340 (վրաց.):»

19 Տեղանքի, հնությունների Ակարագրությունը եւ մեծատառի արձանագրությունների վերծանությունը տե՛ս Jean Mécérian, *Les inscriptions de Mond Admirable*, Beyrouit, 19626 p. 297-330.

20 Ընտանիքով Հայաստանից Անտիոք գաղթելու մասին մի վկայություն ունենք լատինական Եկեղեցու սուրբ, հայագոհ Մակարիոս եպիսկոպոսի վարքում, ըստ որի իշխանական ընտանիքից սերող եւ նոր բնակավայրում ծնունդ ապագայ բարեգործն ու քարոզիչը ոչ միայն գիտեր մայրենի հայերենը (նաեւ՝ յունարեն, ասորերեն, արաբերեն ու եբրայերեն), այլեւ ունէր անտիոքացի հայագոհ չորս գաղափարակից ընկեր, որոնց հետ նա ուխտագնացութեան ու քարոզչութեան մեկնեց Երուսաղէմ (տե՛ս Acta Sanctorum, t. I (1675), էջ 873-896, նաեւ՝ Bibliotheca Hagiographica Latina, Bruxelles, 1900-1901, էջ 757, հմմտ. Ա. Սարուխան, *Բելգիա եւ հայերը*, ՀԱ, էջ 1934, էջ 144-148): Այդ նշանակում է, թէ X-XI դարերում Անտիոքում բնակական ստուար հայություն կար՝ հարկաւ նախորդ դարերից բնակություն հաստատած:

21 «Դրուագներ...», հտ.7, էջ 5:

### ՀԱՅՈՑ ՏԱՐԱԶԱՆԱԽԾԵՐԻ ԳՈՒՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՒՆԸՆԿԱԼՈՒՄԸ

Արմենուհի Ստեփանեան

*Իւրաքանչիւր ժողովրդի տարազան-ւերի ու տարազի զարդանախշերի գունա-յին համակարգը ձեւաւորուել է ժամանա-կի ընթացքում, տուեալ ժողովրդի խորհր-դանշային (սիմվոլիկ) մտածողութեանը, գեղագիտական ճաշակին ու ըմբռնումնե-րին համապատասխան:*

Տարազային համալիրի, ինչպէս նաեւ տարազի զարդանախշի բնութագրման խնդրում յոյժ կարեւոր է գունաշարն ամբողջութեամբ եւ որեւէ գոյնին տրուող նախապատուութիւնը: Վերջին հանգ-մանքն, ինչպէս իրաւացիօրէն նշում է Ե. Ստուդենեցկայան, կարող էր երբեմն ցեղանուան (էթնոնիմի) ծագման պատճառ դառնալ, օր.՝ «Կարակալպակներ» (սեւ գլխարկաւորներ)<sup>1</sup>:

Գոյնը զարդանախշն ընկալելու անհրաժեշտ միջոց է: Գոյնի եւ ձեւի ներդաշնակութիւնը ստեղծում է ընդհանուր համահնչունութիւն եւ էլ աւելի է ընդգծում զարդանախշուած հատուածի նշանակութիւնը: Խայտաբղէտութիւնից զերծ տարազային զարդանախշերի գունաշարին բնորոշ են հանդարտ ու զուսպ գունային անցումները՝ նրբերանգների հմուտ օգտագործմամբ: Համաչափութեան սկզբունքը, որն ընկած է գունա-յին համակցութիւնների հիմքում, ստեղծում է հաւասարակշռութիւն զարդանախշային յորինուածքների բոլոր մասերում՝ անկախ գործուածքի ծաւալից եւ զարդանախշուած մակերեսից:

Ջարդանախշերի գունային աւանդոյթները, սկիզբ առնելով հեռաւոր ժամանակներից, ձեւաւորման նոր փուլ են

մտնում միջնադարում, երբ գոյնն ընկալ-ւում էր որոշակի խորհրդանշական իմաստով: Միջնադարեան գունային սիմվոլիկան բարդ ու բազմազան հասկացութիւնների համալիր է<sup>2</sup>: Տակաւին միջնադարում մեկնաբանները քաջ տեղեակ են եղել մարդկային հոգեբանութեան վրայ գոյնի ներազդող ուժին, ինչը եւ լաւագոյնս օգտագործուել է մանրանկարներում, աւետարանական տեսարաններում: Ըստ այդմ, քրիստոնէական գաղափարաբանութիւնն արտայայտող գոյնների խորհրդիմաստն իր հերթին խարսխուած էր շատ աւելի վաղ պատկերացումների վրայ: Եւ որքան էլ որ ժամանակի ընթացքում, անցնելով տարբեր մշակոյթների ու կրօնական պատկերացումների բովով, փոփոխուել է գոյնների նշանակու-թիւնը, այնուամենայնիւ, ժողովրդի գունազգացողութիւնը պահպանել է նախնական շերտը՝ հարազատ մնալով գունային խորհրդանիշների վաղնշական ընկալմա-նը:

Տարազային զարդանախշերում օգտագործուում է ինչպէս միագոյն (մոնոխրոմ), այնպէս էլ բազմերանգ (պոլիխրոմ) գունաշար: Միագոյն գունաշարում կարեւորում են նրբերանգային փոխանցումներն, ինչպէս եւ զարդանախշ գունազաշտ փոխառնչակցութիւնը: Գունային համակցութիւններն ու գոյնների «ընտրոյթայնութիւնը» կայուն եւ հին աւանդոյթների վկայութիւնն է, ինչպէս այլուր, այնպէս էլ հայոց մէջ խարսխուած ժողովրդական գունընկալման վրայ: Այդ հիմամբ տարբերակում են հիմնագոյնները (կանաչ, կարմիր, կապոյտ,